

ՀԱՂԱՌՈՐԴԻՈՒԲԱՆՆԵՐ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽԱԶԻ ԻՄԱՍՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՐԱԿԱՆԵԿԱՆ ԹԱԳՎՈՐԱԳՈՎՔԵՐՈՒՄ

Նարսանեկան ծիսերգերը, որոնք ընդհուպ մինչև մեր օրերը շարունակել են կենցաղավարել և լայնորեն փարածված են եղել Նայասրանի ազգագրական ամենափայլուն շրջաններում, պահպանել են առասպելական, պաշտամունքային հնագույն շերտեր, որոնց այսօր մենք հասու ենք դառնում գեղարվեստական պարկերավորման զանազան միջոցների՝ մակդիրների, համեմատությունների, այլաբանությունների խորհրդանշական արժեքների մեկնաբանման շնորհիվ: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Վեսելովսկին, սիմվոլի հիմքում ընկած է միֆը, ճիշտ այնպես, ինչպես միֆի առասպելական ընթացքը ամրագրվում է բանի մեջ¹:

Այսպիսի խորհրդանշական արժեքով է հարսանեկան թագվորագովքերում հանդես գալիս խաչը, որի հիմքում ընկած առասպելների հարուստ ենթաշերտերը կփորձենք բացահայտել սույն հոդվածի շրջանակներում:

Խաչի խորհրդանշական պարկերին բազմիցս հանդիպում ենք հարսանեկան փեսագովքերում, մասամբ նաև՝ ծառագովքերում: Ամենատղթակի և փարածված դրսևորումը փեսա-խաչ անմիջական համեմատությունն է. «Մեր թագուրն էր խաչ»: Ընդ որում, երգերում այս բանավորողի բազմակի կրկնությունը հուշում է դրա՝ երգում ունեցած կարևորության մասին, որն անշուշտ, պայմանավորված է հմայական բովանդակավորմամբ. կրկնությունն ընդհանրապես երգերում հմայությունն ավելի իրագործելի դարձնելու միջոցն է:

Մեր թագուրն էր խաչ, մեր թագուրն էր խաչ.
Փասն էր կարմիր, արևն էր կանանց:

¹ См А. Веселовский, Миф и символ // Русский фольклор, т. XIX. Вопросы теории фольклора, Л., 1979, т. 2 175:

Մեր թագուրն էր խաչ, մեր թագուրն էր խաչ,
Խրզն էր կարմիր, արևն էր կանանց²:

Որոշ երգերում «Մեր թագուրն էր խաչ» բանաստեղծին հաջորդիվ հիշատակվում են խաչ բաղադրարարով այլ պարագաներ՝ խաչփոկը³, խաչվառը⁴ կամ խաչկոթը, որոնց պարագային էականը խաչաձևի լինելն է, եւ դա մեկ անգամ եւս շեշտվում է «խաչ ու մաչ⁵» բնութագրումով.

Մեր թագուրն էր խաչ, մեր թագուրն էր խաչ,
Խաչփոկ խաչումաչ, արևն էր կանանց⁶:

Մեր թագուրն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Կոզբանդն էր կարմիր,
Արևն էր կանաչ:
Մեր թագուրն էր խաչ,
Նայոց խաչ ու մաչ,
Ձիուկն էր հրեղեն,
Թագուրն էր վրրեն⁷:

Մեր թագուրն էր խաչ, խաչ կոթ, խաչ ու մաչ,
Բինիշն էր կարմիր, արևն էր կանանց⁸:

Խաչ-փեսա բնութագրմանը հանդիպում ենք նաև հարսանեկան այլ ծիսերգերում, ինչպես օրինակ, փեսայի փան շեմին երգվող հերևոյալ երգում.

Թագուրամէր, դուս արի,
Դսի դռան դէմ արի.
Քու խաչ որդիդ էկեր է,
Կաքվա դոխիկ բերեր է⁹:

2 «Քնար հայկական», խմբ.՝ Մ.Մ. Միանաբյանց, Ս.Պետերբուրգ, 1868, էջ 145:

3 Մերաբսե թաշկինակ, որ պսակի ժամանակ փեսան կապում է կրծքին ուս ընդ անութ (Սյր. Մալխասեան, Հայերէն բացաբրական բառարան, Երևան, հ. 2, էջ 244):

4 Ձողի վրա բարձրացած մեծ խաչ, որը երկու կողմերում երկու կերտներով փարածվում է թափորների առջև (Մաղարիտա արք. Օրմանյան, Ծխական բառարան, Երևան, 1992, էջ 86):

5* Ակադ. Սարգիս Նարեկյանյանը բանավոր գրույցի ժամանակ այն կարծիքն արտահայտեց, թե մաչ նշանակում է աջ ձեռք: Դրա ապացույցն է այն, որ թիֆլիսահայերի բարբառում շափ փարածված է «աջ եւ մաճեփ դալար մուս» օրհնանքը, ուր մաճը նույն՝ ձեռք իմաստով է գործածվում, եւ հենց այսպիսով է ծագել նաև արորի բռնակոթի՝ մաճի անվանումը. մաճը բռնողն էլ հենց աջ ձեռքն է:

6 «Քնար հայկական», էջ 145:

7 «Նազար ու մի խաղ», Ժողովրդական երգարան, խմբ.՝ Կոմիտաս եւ Մ.Աբելյան, Երևան, 1969, էջ 105-106:

8 «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Զ., Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 34:

9 Երվանդ Լալայան, Ջավախք, հ. 1, Երևան, 1983, էջ 161-162:

Փեսայի՝ որպես խաչի ընկալումն ակնհայտ է երգերում. հավանական ենք համարում, որ խաչքավոր և խաչեղբայր նախապես ունեցել են խաչի՝ այսինքն՝ փեսայի քավոր ու եղբայր ստուգաբանությունները:

Անշուշտ, խաչի քրիստոնեական մեկնաբանությունը հեղափոխական ընկալումների արդյունք է, իսկ երգերն իրենց մեջ թաքցնում են շատ ավելի հին փոփոխություններ: Փորձենք հասկանալ ու մեկնաբանել, թե ինչու է փեսան կոչվում խաչ, և ինչ առասպելական շերտեր են թաքցնում թագվորագույնների նմանապիպ մոտիվները:

Խաչ-պարզավորում: Փեսայի հետ կապված՝ խաչերի նման առաքելությունը հուշում է, որ այսպեղ, հանձին խաչի, գործ ունենք փեսայի՝ եթե ոչ գլխավոր, ապա գոնե հիմնական սիմվոլներից մեկի հետ: Անշուշտ նորություն չէ, որ փեսայի, ավելի ճիշտ կլինի ասել՝ հարսի ու փեսայի գլխավոր խորհրդանիշը հարսանեկան երգերում հարսանեկան ծառն է, որին ուղղված՝ աճի, ծաղկման ու պարզավորման մաղթանքները անուղղակիորեն հարսին ու փեսային են ասվում՝ ծառի պարզավորման հարկանիշը նորապսակներին փոխանցելու ցանկությամբ: Պարսկական չէ, որ հարսանեկան ծեսում թագվորագույնները և ծառագույնները գրեթե միաժամանակ են կարարվում և իմաստաբանորեն շատ մոտ են իրար:

Խաչի խորհրդանիշը սերտորեն կապվում է ծառի խորհրդանիշին: Առասպելական պարկերացումների համաձայն՝ խաչն ընկալվում է որպես փնդերական ծառի երկրաչափական փաթեթակ, որը ունի փնդերական համակարգի նույն իմաստաբանությունը, սակայն ընդգծված մարդակենտրոն գաղափարաբանությամբ¹⁰: Դեռ փասնչորսերորդ դարում Գրիգոր Տաթևացին խաչը դիտում է որպես կենաց ծառ, իսկ կենաց ծառի մեջ փնտնում խաչի գաղափարը¹¹:

Նայկական զարդանախշերից շարերում խաչը ներկայանում է չորս պարզերի ճյուղերով, և ինչպես հիմնավորում է Ա. Մնացականյանը, այն չորս փաթեթների միացության խորհրդանիշն է, որը, կապված լինելով աճման և պարզաբանության հասկացությունների հետ, միշտ հանդես է գալիս վարսանդա-պարզային սիմվոլների և կենաց ծառի հետ զուգահեռ¹²: Ավելին, հաճախ խաչի ձևով կառուցված կենաց ծառերի երկու կողքերում կանգնած են լինում զույգ թռչուններ, որոնք արտահայտում են ծնող-զույգի իմաստը: Երկուսի միացությունը խաչի խորհրդանշական պարկերով է դրսևորվում նաև հարսանեկան ծեսում, և դա լավագույնս երևում է փեսայի կրծքին խաչաձև կապվող կանաչ-կարմիր ոսկապի ծիսական իմաստավորման մեջ: Ազգագրական վկայությունները փաստում

10 Տե՛ս **В. Н. Топоров**, Крест, Мифы народов мира, М., 1992, т. 2, էջ 12:

11 Տե՛ս **Գր. Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 768: Խաչ-կենաց ծառ զուգահեռի մասին փնտնելու **Л. А. Абрамян, А. Р. Демирханян**, Мифологема близнецов и мировое дерево. (К выяснению значения одного класса наскальных изображений древней Армении). ՊԼՇ, 1985, ք. 4, էջ 77-78:

12 Տե՛ս **Ա. Շ. Մնացականյան**, Նայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 182-185:

են, որ երկու ժապավեններից մեկը կապվում էր փեսայի փանը, մյուսը՝ հարսի¹³, այսինքն՝ դրանք գույգավորվող փեսային ու հարսին էին խորհրդանշում: Խաչի՝ որպես գույգի միացության և պողպատության խորհրդանշի ընկալման հերթանք է այն, որ հայերենում բեղմնավորման պրոցեսը կոչվում է նաև *խաչավորում*¹⁴:

Խաչի պողպատող գործությունն ակնհայտ է հարկապես նրա՝ բուսական ծագման հանգամանքում: Խաչի բուսական պարկերը մեզ ծանոթ է նաև «Կարոս խաչ» հայրնի վիպերգից: Ինչպես կրեանենք ստորև, ե՛ն հարսանեկան երգերում, ե՛ն ծեսում խաչը զարդարում է կենաց ծառի գագաթը: Ավելին, ծեսում այդ խաչը ջղանի¹⁵ բաղադրաբարն է, որը գրվում է խնձորի վրա: Նույնպիսի խաչեր զարդարել են եկեղեցիների գմբեթները՝ իրենց փակ ունենալով ոսկե խնձոր¹⁶: Փաստորեն երկու դեպքում էլ խաչը բուսական ծագում ունի. աճում է պողպատող խնձորից՝ ինքը եւս օժտվելով պողպատող գործությամբ: Պարահական չէ, որ խաչի գործությամբ ու հովանավորությամբ բազմանալու և սերնդագործելու մաղթանք-հմայությունը հարսանեկան երգերում կրկնվում է մեկից ավելի անգամ.

Տաշրի ծաղիգ օր ծաղկռավ,
Թուփն ու դերև օր թփռավ,
Վարք, մանիշագ օր վարպռավ՝
Սուրպ խաչ վրեն, օր պազմանան...¹⁷

Այսպիսով, խաչը հարսանեկան երգերում փաստորեն հանդես է գալիս որպես կենաց ծառի՝ փիեղերական այս մանրապարկերի մեկ այլ դրսևորում: Սակայն եթե ծառն իր մեջ ամփոփում է եւ՝ հարսի կերպարը, եւ՝ ողջ ընտանիքը, եւ՝ դուրս գալով նեղ սահմաններից, վերածվում մի յուրօրինակ փոստամատի, ապա խաչի խորհրդանիշը անմիջականորեն փեսայի հետ է կապվում, որով էլ մեկնաբանվում է «մեր թագուրն էր խաչ» բանարողի՝ այնքան հաճախադեպ կիրառությունը թագվորագովքերում:

Խաչ-գոհարներում: Խաչի հիշարակումները հարկապես առաջ են փեսային հագցնելիս երգվող երգերում, ուր գրեթե կայուն գործածություն ունեն «Զուգեցինք, հա՛յ թամամեցինք, // Զխաչն ի վրեն բազմեցուցինք»¹⁸ բանարողերը: Այլ փաթերակներում ուղղակի հիշարակվում է փեսայի գլխի խաչը:

13 Տե՛ս **Գ. Շաղոյան**, «Յոթ օր, յոթ գիշեր», հայոց հարսանիքի համայնապարկեր, Երևան, 2011, էջ 270-271:

14 Տե՛ս անդ, էջ 191:

15 Զղան - խնձոր, որը վրա կա գույնզգույն թելերով զարդարած մի խաչ: Մրանով զարդարում էին ուրցի (հարսանեկան ծառի) գագաթը (**Գ. Շաղոյան**, «Յոթ օր, յոթ գիշեր», էջ 280):

16 Նույն փեղում, էջ 135:

17 **Ռ. Խաչատրյան**, Թալին, ՆԱԲ, հ. 19, էջ 115:

18 «Նազար ու մի խաղ», խմբ. Կոմիտաս և Մ.Աբելյան, էջ 105:

Տեր Կարաբեդը սայլերով,
Առ աստված փառաբանելով,
Թակվորին գովինք օրշնելով,
Գլխին՝ խաչ նշան ունենա¹⁹:

Փեսայի գլխի խաչը, բանաստեղծական պարկերավորում լինելուց բացի, նաև զուր ծիսական նկարագիր ունի, քանի որ հայրնի է, որ փեսայի թագը սովորաբար զարդարել է պսակը՝ մի փայլել խաչ՝ փաթաթված գույնզգույն թելերով²⁰: Բացի այդ, ազգագրական վկայություններ կան նաև այն մասին, որ սավիթից առաջ փեսայի այրերին գինով խաչ էին անում²¹:

Ինչպես նշվեց վերը՝ ծառագովքերի որոշ փարբերակներում եւս հիշարակվում է հարսանեկան ծառի գազաթը սովորաբար զարդարող ջղանը՝ խաչով խնձորը.

Ծառ խնկենին, որ ծաղկեցավ ,
Թուփն ու փերեւ բոլորեցավ ,
Սուրբ խաչ վրեն որ բազմեցավ ,
Թագվոր, աթոռք, ուրախացավ²²:

Իսկ երբեմն էլ դժվար է հասկանալ՝ խոսքը փեսայի՞, թե՞ ծառի գլխի խաչի մասին է, մի փաստ, որ դարձյալ նույնականացում է սրեղծում փեսայի եւ հարսանեկան ծառի միջև.

Էն ասարածոյ օրհնութենով,
Ծառ այս այր բազմեցար.
Խաչ ալամն ի գլխուդ,
Խաչ ալամ բազմեցար²³:

Թագվորագովքերից մեկում ծառի եւ փեսայի գլխի խաչերը ուղղակիորեն նույնանում են.

-Ծաղկեցաւ ծառս կենաց՝
Էն թագաւորն է.
Բազմեցաւ խէջն ի գլխուն՝
Էն իւր պսակն է²⁴:

19 Ռ.Խաչատրյան, Թալին, էջ 116:

20 Տե՛ս Գ. Շաղոյան, «Յոթ օր, յոթ գիշեր», էջ 263-264:

21 Տե՛ս «Ազգագրական հանդես», գրքեր VII եւ VIII , 1901, էջ 254:

22 Վ. Պետրոյան, Սասնա ազգագրություն, Երևան, 1965 , 247:

23 Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 289-294:

24 Անդ, էջ 301:

Եթե հերքենք վերը բերված փաստերի փրամաբանությանը, ապա հարիկից ելնող՝ բուսական ծագման խաչի մոտիվը ուղղակիորեն կգուզադրենք հացահատիկի հնագույն մեռնող-հառնող աստվածությունների առասպելներին, պարզապես այն փարբերությամբ, որ հարսանեկան երգերում հացահատիկի փոխարեն որպես սերմնահատիկ հանդես է գալիս խնձորը. խնձորի՝ սերմնավորող, բեղմնավորող հարկանիշների մասին բազմաթիվ վկայություններ ենք գտնում ինչպես հարսանեկան երգերում, այնպես էլ ժողովրդական հեքիաթներում, ուր անպարտ թագավորն ու թագուհին զավակ են ունենում՝ ուրելով դերվիշի փված խնձորը: Նույն փրամաբանությամբ կարելի է ենթադրել, որ ինքը՝ մեռնող-հառնող փեսան, այն սերմնավորող հարիկն է, որից աճում է բուսական խաչը, եւ ինքը՝ փեսան խաչ է: Այսինքն՝ փեսայի կերպարը համադրելի է հնագույն մեռնող-հառնող բուսականության աստվածներին՝ որպես նոր կյանքի արարողի, նոր աճի ու պրոդաբերության սկիզբ դնողի: Փեսայի՝ որպես մեռնող-հառնողի վառ ապացույց է դառնում հարկապես խաչ-փեսա բնութագրումը. խաչը հնուց ի վեր՝ դեռ նախաքրիստոնեական ժամանակներից, հայրնի է որպես գոհաբերման գործիք:

Անշուշտ, բնության ամենամյա նորոգման առասպելները սերտորեն կապվում են հարսանեկան ծեսի հնագույն իմաստաբանությանը: Ուսումնասիրողները հարսանեկան ծեսի արմարները հանգեցնում են սրբազան ամուսնության առասպելին²⁵, որը սկիզբ առնելով աշխարհարարման առասպելից՝ հերազայում վերածվել է աստվածների եւ աստվածուհիների՝ ամենամյա սրբազան ամուսնության ծիսականացված արարողության՝ բնության աճին նպաստելու նպատակով²⁶: Վարսանեկան ծիսերգերում նորապսակներին երկնային լուսավորների հետ համեմատելը հենց այս հիմք-առասպելից է գալիս: Ավելին, փեսայի՝ հարկապես լուսնային կերպարում եւս մեկ անգամ շեշտվում է նրա մեռնող-հառնողի հարկանիշը: Չարմանալի չէ, որ լուսնի մասին հայրնի աղոթքի փողերը գրեթե նույնությամբ հանդիպում են նաեւ հարսանեկան ծիսերգերում:

Լուսնկան նոր, կարմիր

Կանաչ թագաւոր,

Ծեր գնաց, մանուկ եկաւ,

Մեղքս փարաւ, վարձքս բերաւ²⁷:

Նայ բանավոր ավանդության մեջ լուսնի՝ որպես նորափեսայի, մանուկ թագավորի ընկալումը շար փարածված է²⁸:

25 Տե՛ս Դ. Ա. Левинтон, Священный брак, МНМ, т. 2, էջ 422-423.

26 Տե՛ս Զ. Զ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989, էջ 170-178:

27 Դ. Ալահայրդյան, Բալոյի (եւ փարածաշջանի) երաժշտական ազգագրական հաւաքածու, Կոնկրետ, Գալիֆորնիա, 2009, էջ 92:

28 Տե՛ս Մ. Յարութիւնեան, Նայ առասպելաբանութիւն, Բէյրութ, 2000, էջ 62-63:

Արբազան ամուսնության առասպելին իմաստաբանորեն հարում է բնության զարթոնքի, մեռնող-հաճող բուսականության առասպելը: Այս մասին է վկայում նաև այն փաստը, որ արբազան ամուսնության արարողությունը Միջագետքում կատարել է նույն դերը, ինչը կատարել է Նին Եգիպտոսում մեռնող ու հարություն առնող ասպծո արարողությունը²⁹: Երկուսով էլ մարդիկ նպատակ են ունեցել նորոգելու բնությունը, ապահովելու բուսականության նոր աճն ու պոդաբերումը:

Նարսանեկան ծեսի հիմքում ընկած է կյանքի ծառի նորոգման, նոր աճի ու բերքավորության գաղափարը: Այս դեպքում հանուն նորի գոհաբերվող՝ մեռնող-հաճողը խաչ-փեսան է, որ զարդարում է կենաց ծառի գագաթը:

Ծառի վրայի խաչի մոտիվի մի ուշագրավ դրսևորում առկա է միջնադարյան բազմադարձերակ մի ծիսերգում, ուր աշխարհի առանցքը խորհրդանշող ծառի կազմությունն ավարտվում է ձվի միջի թռչնաձագով՝ թռիին խաչանշան: Ինչպես իրավացիորեն մեկնաբանում է Ս.Նարությունյանը, «Ծառն ու ճիւղը այս համադրության մեջ խորհրդանշում են հին գոհասեղան գաղափարը, իսկ ձուից դուրս եկած ձագը՝ թռիի քաչանշանով՝ գոհաբերուած երիտասարդ Ասպծուն, որի գոհաբերութեամբ կանգուն ու հաստատուն է մնում Աշխարհի կամ Կիեզերական կարգուկանոնը»³⁰:

Ազգագրագետ Գ. Շագոյանը, փեսային սափրելու եւ հագցնելու ծեսերի հիմքում տեսնում է արարման առասպելը, ուր փեսան հանդես է գալիս որպես առաջնագոհ, որի մարմնի մասերից արարվում է Կիեզերքը, ապա Կիեզերքի տարբեր մասերից կրկին արարվում է առաջին մարդը³¹: Անշուշտ, առասպելաբան էլ աշխարհայացքի համաձայն՝ յուրաքանչյուր նորի սրեղծման հիմքում (տվյալ դեպքում՝ ընտանիքի) ընկած է գոհի գաղափարը, որ դրսևորվում է առաջնագոհի առասպելի հնագույն սխեմայի համապատասխան: Այս հնագույն առասպելը տվյալ դեպքում մասնավոր բնույթ է ստանում: Նարսանեկան ծառը, լինելով Կիեզերական մանրակերտ, միևնույն ժամանակ ծեսում ընկալվում է որպես մասնավոր տոհմի աճման ծառ՝ տոհմաձագ: Եւ դա ավելի քան տեսանելի է այն թագվորագովքերում, ուր հերթով հիշատակվում են փեսայի ընտանիքի՝ ծառի ճյուղերին շորորվող անդամները.

Կանչեր բերեր զթագվորահեր,
Որ գիկեր շորորն ի ծառին,
Ծնդրիկ գարկեր սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին³²:

29 Տե՛ս «Նին արևելքի պոեզիա», Երևան, 1982, էջ 518:

30 Ս. Յարութիւնեան, Նայ առասպելաբանութիւն, էջ 27:

31 Տե՛ս Գ. Շագոյան, «Յոթ օր, յոթ գիշեր», էջ 285-291:

32 Մահակ Մովսիսյան, Նարք (Մշո Բուլանդի), ՂԱԲ, հ. 3, Երևան, 1973, էջ 108-109:

Այսպես հիշարարկվում են նաև ծառի վրա շորորվող թագվորասները, թագվորաբուրը, թագվորախաչերը: Մեկ այլ ծառագովքում ընտանիքի անդամներն ու փեսայի մարերիմները ներկայացվում են որպես խնձորներ:

-Այն խնձոր, գլխախնձոր,
Տեսէ՛ք, այն ո՞րն է,
Այն խնձոր, գլվագլոր՝
Այն ազափներն է:
-Այն խնձոր աջ աթոռին,
Տեսէ՛ք, այն ո՞րն է.
Այն խնձոր ձախ աթոռին,
Տեսէ՛ք, այն ո՞րն է:
-Այն խնձոր աջ աթոռին՝
Այն խաչեղբայրն է.
Այն խնձոր ձախ աթոռին՝
Էն թագուհին է³³:

Նարկանշական է, որ ծառի ճյուղերին կամ խնձորների միջև չեն հիշարարկվում հարսի ընտանիքի անդամները, քանի որ ամուսնությամբ աճ է տալիս հենց որդու գերդաստանը: Փեսայի խորհրդանշական կերպարը փաստորեն համապարասխանում է ծառի գագաթին բազմած խաչին: Նաև ծառի նոր աճի՝ գոհաբերվողն այս դեպքում նորափեսան է, որին պետք է հաջորդի նրա վերածնունդը և ծառի նոր ճյուղավորումն ու բողբոջումը: Այս դեպքում բնության նորոգման առասպելը մասնավոր բնույթ է ստանում՝ փիեզերական լայնամասշտաբ իմաստաբանությունից իջնելով փոհմային նեղ շրջանակներ:

Խաչ-փեսա-Քրիստոս: Եթե նախաքրիստոնեական շրջանում ծեսին նախադեպ-առասպել էր ծառայում սրբազան ամուսնության կամ մեռնող-հառնող բնության առասպելը, ապա քրիստոնեական ժամանակաշրջանում սրբազան ամուսնության առասպելը կապվում է փեսա-Քրիստոսի և եկեղեցի-հարսի ամուսնությանը: Այս պարագային արդեն տեղի է ունենում փեսա-Քրիստոս նույնացումը: Այսպիսի մեկնաբանություն է ստանում ինչպես Աստվածաշնչյան Սողոմոնի ու Սուլամիթայի հնագույն սիրավեպը, այնպես էլ՝ հայրկապես միջնադարում՝ հարսանեկան ծիսերգերը:

Որպես աշխարհի նորացման համար գոհաբերվող կերպար՝ Քրիստոս լիովին համապարասխանում է հնագույն մեռնող-հառնող բուսականության աստվածներին: Փեսա-Քրիստոս նույնացումը ավելի քան ակնհայտ է խաչի սիմվոլիկայում, որն, ինչպես արդեն տեսանք, սկիզբ առնելով հնագույն հավատարարներից, քրիստոնեության շրջանում նոր շունչ է առնում: Փեսայի թագի

33 Ա. Մնացականյան, Նայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 301:

վրայի պսակը՝ խաչը, նրա գլխին գինով խաչ անելը փեսային գոհաբերվող կերպարի հարկանիշներով են օժտում, որից հետո փեսային «նոր ծագող արևի», «մանուկ թագավորի» հետ նույնացումն արդեն հարության՝ նոր աշխարհի վերաշինման մոտիվներ են բերում: Որոշ երգերում փեսա-Քրիստոս զուգահեռն ավելի քան ուղղակի է դրսևորվում, ուր փեսան ոչ թե խաչ է, այլ խաչ ելնողն է.

Ընդունեց խաչ ելնել,
թագուորը մեկիկ է.
Ելէք իր առջևն երթանք,
վոր չի մընայ ջեհիկ խաթեր³⁴:

Նույն երգասացի՝ Մշո մեկ այլ փեսագովքում արդեն «*Մեր թագուորն էր խաչ*» բանաբառին փոխարինում է «*Մեր թագուորն ի խաչ*»³⁵ ձևը:

Խաչ-հմայիլ: Վերը հիշարակված բոլոր իմաստներից բացի, խաչը ընկալվել է որպես կյանքի ու մահվան խորհրդանիշ: Նույն եկած հավաքալիք է խաչը՝ որպես հմայիլ, կրծքին կրելը: Դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում խաչն ունեցել է կյանքի եւ մահվան միասնության, անմահության խորհրդանշում: Քրիստոնեական շրջանում արդեն խաչը հանդես է գալիս որպես հմայիլ, որ կրում են մարդիկ եւ հապկապես հիվանդները իրենց կրծքին, եւ որը բուժում եւ կենսական ուժեր է հաղորդում նրանց³⁶: Այսպիսի մի հմայիլ է «Սասնա ծռերում» Մսե խաչը կամ Խաչ Պապրագին, որին փրկում են Սասնա Կրան չորս սերնդի ներկայացուցիչները, եւ որն անխոցելի է դարձնում նրանց³⁷: Ավելի ուշ այդ հմայիլ-խաչի մոտիվը դրսևորվել է նաեւ գորավար Անդրանիկի անվան շուրջ հյուսված ավանդություններում³⁸:

Փեսան հարսանական ծեսում այն կերպարն է, որն ավելի քան հմայական պաշտպանության կարիք ունի, եւ բազմաթիվ միջոցներ են ձեռք առնվում՝ նրան չար ուժերից հեռու պահելու, հապկապես՝ նրա առնությունը պաշտպանելու համար: Այսպիսի նշանակություն է ունեցել նաեւ նախքան խաչը՝ քավորի կողմից փեսայի եւ հարսի գլխավերելում պսակի արարողության ժամանակ թուր բռնելը, որը պետք է չեզոքացներ բոլոր չար ոգիներին (խաչ-թուր սիմվոլների նույնականացում)³⁹:

34 **Պ. Ալախպուրյան**, Բալուխ (եւ Կարաձաշջանի) երաժշտական ազգագրական հաւաքածու, էջ 120:

35 Անդ:

36 Այս մասին փնէ **В. Н. Топоров**, Крест, Мифы народов мира, т. 1, М., 1991, էջ 13-14, **Ասրդիկ Բարսեղյան**, Նմայական պահպանակները հայոց հավաքալիքների համակարգում (սեղմագիր), Երեւան, 2006, էջ 13-14:

37 Այս մասին փնէ **Ն. Վարդանյան**, Մսե հմայիլի մոտիվը հայ բանահյուսության մեջ. «Նայ ժողովրդի մշակույթ», XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երեւան, 2007, էջ 305-310:

38 Տե՛ս անդ:

39 **Ռ. Նահապետյան**, Քավորը հայոց մեջ (ըստ աղձնիքահայերի ազգագրական փոխառումների), «Պատմա-բանասիրական հանդես», 2007, թ. 1, էջ 136:

Փետայի հանդերձանքներում խաչերի առաքությունը նաև այս փեսանկյունից է կարևորվում. անշուշտ, դրանք պարզաբերման և գույգության իմաստավորումներից բացի հմայիլի, չարխափանի դեր են կատարել:

«Սասնա ծռերի» մեկ հմայիլի հեքիաթային մեկ այլ փարբերակ է մեկ թուրը, որը դարձյալ հերոսին անխոցելի դարձնող հմայիլ է⁴⁰: Հարսանեկան ծեսում էլ մենք փեսնում ենք ծառ-խաչ-թուր սիմվոլիկայի նույնացում. հարսանեկան ծառը որոշ դեպքերում հենց խաչից էր սարքվում, իսկ ավելի ուշ՝ մեզ մոտիկ ժամանակներում, գերակշռում է թրի՝ որպես ծառի զարդարելը: Ընդ որում, ուշագրավն այն է, որ հնում հարսանիքում որպես չարխափան գործածվող թուրն այժմ իր վրա է վերցնում նաև պարզաբերության կենաց ծառի գործառույթը⁴¹:

Այսպիսով, ինչպես փեսնում ենք, հարսանեկան թագվորագովքերում խաչը բավական հարուստ ու բազմազան իմաստաբանություն ունի, որը օգնում է բացահայտել ինչպես ծեսի հիմքում ընկած առասպելները, այնպես էլ՝ փետայի կերպարի ընկալման յուրահատկությունները:

Ըստ այդմ.

1. Խաչի բուսական ծագման նշանները՝ հիմքում ընկած խնձորը, կենաց ծառի հետ անմիջական ընդհանրությունը, հուշում են, որ հանձին խաչի՝ մենք գործ ունենք կենաց ծառի մեկ այլ գաղափարապարկերի հետ, որը դարձյալ կատարում է գույգի միության ու պարզավորման խորհրդանիշի դերը և որը, սակայն, ի փարբերություն ծառի, բացառապես փետայի կերպարին է առնչվում, և հենց դրանով է պայմանավորված «մեր թագուրն է խաչ» և նման բնութագրումների բազմակի կրկնությունը թագվորագովքերում:

2. Երգային ու ծիսական նյութը ցույց են տալիս, որ և՛ փետայի գլուխը, և՛ ծառի գագաթը զարդարում է խաչը: Ծառի գագաթի խաչը համապատասխանում է փետա-գոհ իմաստաբանությանը: Տիեզերական առասպելական այս պարկերը հարսանեկան ծեսի համապատասխանում նոր շունչ է ստանում. ծառը փվյալ դեպքում փոխմի աճման ենթակա ծառն է, և նրա նոր ճյուղավորումը պերթ է իրագործվի մեռնող և հառնող կերպարի՝ նորափետայի գոհաբերման ճանապարհով:

3. Քրիստոնեական ժամանակաշրջանում արդեն խաչ-փետա-գոհ իմաստաբանությունը ուղղակիորեն կապվում է Քրիստոսի կերպարին, և երգային նյութում հայտնվում է արդեն խաչ ելնող, խաչվող փետայի կերպարը:

4. Ի վերջո, փետայի կերպարի հետ կապված խաչերի առաքությունը պայմանավորված է նաև խաչի՝ որպես չարխափան-հմայիլի գործածման հնագույն հավատարիքով, որի վկայությունն է ոչ միայն փետայի կրծքի խաչաձև ուսկապը, այլև չարխափան թուր-խաչ սիմվոլների նույնությունն ու մեկը մյուսով փոխարինելու հանգամանքը:

40 Տե՛ս անդ:

41 Այս մասին փեսն **Գ. Շաղոյան**, «Յոթ օր, յոթ գիշեր», էջ 282-283:

РЕЗЮМЕ

В статье исследуется символическое осмысление креста, который часто встречается в свадебных величаниях жениха. Растительные приметы креста подсказывают, что в образе креста мы имеем дело с некой идеологической картиной древа жизни, как символа плодородия- непосредственно связанное с женихом.

Песенные и ритуальные материалы показывают, что голову жениха и вершину дерева украшает крест, который осмысляется как жертвенный жених. Дерево в этом контексте дерево рода, которое должно дать новый рост, за счет жертвоприношения жениха.

В христианские времена уже крест-жених-жертва символика связывается с Христом, и в песнях появляется образ распятого жениха.

Обилие крестов в величаниях жениха обусловлено также свойствами креста - как талисмана, с которым связан и крестообразный “козбанд” жениха, и крест-мечь, который тоже использовался в ритуале, как талисман.

SUMMARY

The article studies the symbolic semantics of the cross frequently met in the wedding tagvoragovks (praising of the groom). The signs of the plant origin of the cross show that we deal with another metaphor of the tree of life, which again symbolizes the union of the couple and impregnation directly associating with the image of the groom.

The song and ritual materials show that both the head of the groom and the top of the tree are ornamented with the cross. The cross on the top of the tree complies with the semantics of groom being a victim. In this particular case, the tree symbolizes the continuation of the dynasty, its new derivation shall be carried out through sacrificing the groom.

In the Christian period, the semantics of cross-groom-victim is already associated with the image of the Christ and the image of the crucified groom appearing in the song materials.

Finally, the abundance of the crosses associated with the image of the groom is due to the ancient belief of using the cross as an amulet nipping the evil demonstrated not only in the grooms' crossed sash, but also the sameness and replaceability of sabre and cross symbols.